

Կիրճին շուկային լուսազոյն նպարտամատի խանութը կերկերենց Իշխանինն էր :

Օր մը մեր Մարտիրոսին Իշխանին կը դիմէ եւ քաղաքավարօրէն բարեւ տալէ վերջ կը հարցնէ .

— Ի դին քանի՞ դահեկանի վաճառի զկենդինսն կրետական աճառի : Երեւակայեցէք խեղճ Իշխանին առած գէմքը :

Մեր Մարտիրոսին տունն ալ դրարար խօսիլ կը սկսի եւ ամէն բառի առջև «զ» գիրը դնելով կը կարծէ դրարար խօսած ըլլալ : «Զայս բեր, զանկա տար, զչորերս տուր» եւ այլն :

Կինը ատեն մը կը համբերէ, սակայն օր մըն ալ համբերութիւնը կը հասնի եւ կ'ըսէ .

— Քա մարդ, ինչ սարսուռ սուրուռ կը խօսիս :

— Զսարսուռն եւ գսուրուռն զո՞ւ բարբառիս, զկին դու, կը պատասխանէ մեր «դրարարագէտը» :



ԳԵՊՔԵՐ ԵՒ ԱԻԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — Գարնան Կիրակի եւ տօն օրերը մարդագեանի վրայ սեղան դարդաբերով առատ թուրթի օղիի փարչերը լեցուն, հայերը դուարթ ժամանակ կ'անցնեն Կուզի աղբիւրին եզերքը : Հոս թուրք դոյութիւն չունի :

Մեր ծերունիները տարօրինակ պատմութիւն մը ունէին այդ տեղի մասին :

Կուզի աղբիւրէն քիչ վեր՝ լերան կողքին կայ Արջուն մաղարան, քաղաքը, այս վայրի կենդանիին մշտական բնակարանը : Ըստ աւանդութեան՝ թաղին վտանգ մը սպառնալու ատեն՝ աղբիւրին քով կուզ մը դալով ձայն կու տայ եղեր : Արջը կուզին ձայնը լսելով՝ քարայրէն դուրս դալով կը սկսի քառաչիլ եւ սաստիկ աղմուկ բարձրացնել : Արջուն ձայնը լսելուն պէս թաղեցիները խօսոյն կը գլնուին եւ թշնամիին դիմադրելով ետ կը մղեն դանոնք :

Թաղեցիները զիրենք ազատող այս երկու կենդանիներուն՝ կուզին եւ արջուն համար՝ միշտ ուտելիք տանելով քարայրին առաջ կը դնէին :

Որսորդին մէկը կը յաջողի կուզը սպաննել : Արջը՝ այլեւս կուզի ձայնը չլսելուն՝ ինքն ալ քարայրը թողելով՝ ծովուն ետեւը կը քաշուի : Այս պատճառով թշնամիին դալով՝ անպատրաստի կը գտնէ թաղեցիները եւ թալանի տալով կը հեռանայ :

Թաղեցիները եկեղեցի կ'երթան, մոմ կը վառեն եւ կ'անիծեն որսորդը՝ որ իրենց ծանօթ է եղեր : Որսորդը անդամայոյժ կ'ըլլայ եւ այսպէս կուզը դարնելուն համար կը պատժուի :

2. — Կիրճինի դետը եզերող ձորին հիշխսային կողմը, որ քանի մը հարիւր սաք բարձրութիւն ունի՝ Թեքղետիր անունով կը ճանչցուի :

Մովի ձախ կողմէն մինչեւ Ղեթմերենց եւ Միսիրենց պարտէզները միայն տօնիկ կան : Հոս բարձունքը շունենալով տափակ վայրեր՝ մէկ մղոն երկարութեամբ նեղ ճամբայ մը միայն կայ մինչեւ Թաքելենց թաղը :

Ղեթմերենց պարտէզներէն գէպի վեր Թեքղէ Տիրը տանող ճամբան

կ'երթայ կը հասնի մինչեւ ԽՅԱԼԻ ԿՄՈՒՐ ԿՈՇՈՒԱԾ Ուխտատեղին, ուր՝ լեբան կուրծքի սպառաժներու ճեղքուածքէն բիւրեղի նման մաքուր ու սառնորակ սղորբ մը կը հասի:

Կիւրինի հինաուրց ուխտատեղիներէն մէկն է ան:

Գարունէն մինչեւ աշուն ուխտաւորները անպակաս են: Տեսակ մը երկիւզած պաշտամունքով կը մօտենան այդ վայրին: Աղբիւրը շրջապատուած է բարախի եւ ուռնիի ծառերով, որոնք ամառուան այրող տաքին դէմ ուխտաւորները հովանաւորելու կը ծառային: Ծառերու շուքին տակ՝ ուխտաւորները առանձին խումբերու բաժնուած՝ հետեւին բերած փոսոցներու վրայ կը նստին:

Հոս ամէն ինչ առատ է: Ուխտաւորներու խումբեր հետեւին կը բերեն մէկ-երկու դանուկներ եւ ուլիք: Հոն է քահանան մատաղ օրհնելու համար. առանց օրհնելու՝ մատաղը հաւատացեալներու համար ընդունելի չլլար: Քահանան դանուկը եւ ուլիքը օրհնելէ վերջ՝ մորթելու համար դործածուելիք դանակն եւս կ'օրհնէ:

Չօհերը մորթելով՝ բարդիի կամ ուռնիի ճիւղերէն կը կախեն: Փորտիքը հանելէ ու մորթը քերթելէ ետք՝ աղբիւրի ջուրով մաքրելով՝ կը դնեն խոշոր պղինձներու մէջ եւ առանց աղի կը խաշեն: Խաշին ջուրը կը դործածեն պղուր փլիւաւին համար, իսկ միւր քրքրելով հոն՝ տեղին վրայ պատրաստած՝ առանց աղի լաւաշներու մէջ փաթթելով ժողովուրդին կը բաժնեն, տարբերութիւն չ'ընէր թէ անոնք ծանօթ են թէ օտարական, հերիք է որ իւրաքանչիւր առնույ մալթանքներով եւ «ուխտդ կատարեալ» ըսելով կը շնորհաւորէ:

Խոշոր բաժին մըն ալ կը հանեն քահանային, որ վերարկուին մէջ պետեղելով տուն կը տանի:

Սմէն կողմէ մալթանքներու ձայներն իրար կը խառնուին «բժշկութիւն ձեր հիւանդին», «Խոնուր կտուրըն օգնէ իր առողջութեան»:

Արարողութիւնը վերջանալէ եւ քահանային օրհնութիւնն ալ տանելէ յետոյ՝ հիւանդին հին լաթի մաքուր կտորները ծուէններու բաժնելով՝ աղբիւրին եզերքը փշատենիներու, մասուր ալոճներու եւ ուրիշ թուփերու վրայ կը հանդոյցեն՝ հիւանդին ցաւը հոն թողած ըլլալու հաւատքով: Լաթի այդ կտորները շատ անգամ դոյնդոյն ըլլալով՝ հեռուէն տեսնողը կը կարծէ թէ ծառերը ծաղիկեր են:

3.— Չորախի ձորին մէջ կայ պղտիկ ջրվէժ մը, որ հարիւր ոտք բարձրութենէ մը վար կը թափի եւ անոր ջուրը մօտ երեսուն ընտանիքներու թէ՛ խմելու եւ թէ՛ անոնց պարտէզները ջրելու կը բաւէ:

Չորախ ձորը ունենալով բնականէն տեսակ տեսակ նկարներով դարդարուած սալ քարի կտորներ՝ տեղւոյն բնակչութեան համար իրենց բողբոջ փորձելու կը ծառայեն: Այդ քարերուն վրայ կտրելի է տեսնել մարդու, լուսնի, դրամի եւ դանազան կենդանիներու, նաև ծառի, բոյսի նմանող պատկերներ:

Հոս կու գան, հողը կը խառնեն եւ քար մը կը հանեն: Եթէ քարին վրայ մարդու, դրամի, լուսնի կերպարանքի նմանող նկար մը կայ՝ հանողը բախտաւոր կ'ըլլայ, իսկ եթէ որեւէ կենդանիի կամ բոյսի պատկեր կայ՝ հանողը անբախտ կ'ըլլայ:

4.— Չորսիսի ձորին հետ կապուած է նաև Ղըրվախ Ալուճիճ՝ Կիւրիին միակ ճղնաւորին պատմութիւնը: Այդ ձորի աղբիւրի կողքին կայ խոռոչ մը, ուր մէկ հողի կրնոյ ապահով ապաստանիլ:

Այս խոռոչը իբր բնակարան կը ծառայէր Կիւրիին միակ ճղնաւորին՝ Ղըրվախ Ալուճին: Եօթանասունը անց ծերուկ մըն էր՝ տարօրինակութիւններով օժտուած: Զմեռն ամբողջ իր դաւակներուն հետ ապրելով՝ եկեղեցիէն դուրս չէր ելլեր: Սաղմոսն ու Նարեկը՝ գրեթէ ծայրէ ի ծայր դոց զիտէր. «Տէր Ամենակալը» իր սրտին մօտիկ աղօթքն էր, որ օրը գէթ անգամ մը պիտի արտասանէր ու սրտին խորէն բացազանչէր «Ամենակալ թող զմեզն իմ», կարծես աշխարհի բոլոր մեղքերը իր վրայ բեռնուած ըլլային:

Ամէն մէկ հարցումի, ժխտական թէ դրական՝ որոշ բնատիպ ասացուածք մը ունէր, որ շատ կը պաշարէր. «Տէրը գիտէ, ինքը գիտէ»: Ահա իր հաւատքի ամբողջ խարխիւլը, սրուն վրայ հաստատուած էր իր փիլիսոփայութիւնը:

Գարնանամուտին հաղիւ թէ վայրի ուտելիք կանաչեղէնները՝ սինձը, ճվրճիթը, վայրի ընկալը, թթուկիչն ու գաղբիկը կը սկսէին ծլիլ՝ արդէն իր դարնան եւ ամառուան պաշարը մասամբ ապահովուած կ'ըլլար: Տեղէր հաց մը, թիչ մը աղ, սղաղ աղբիւրին մէջ թրջած չոր հացին հետ իր փորը կըտացնելու կը բաւէին: Իսկ ուխտի եկողները, որոնք անպակաս էին ամառը եւ պաշարներով բեռնաւորուած կու գային՝ իրենց խրախճանքին մէջ՝ չէին մտնար բաժին հանել ճղնաւորին:

Ամառուան տաք դիչերներուն՝ բացօդեայ զով դիտիւններով կազդուրուած անկիւ խոռոչին մէջ կը քնանար պետիւնը փռուած հին լաթի եւ քիլիմի կտորներուն վրայ: «Տէրը գիտէ, ինքը գիտէ»ն ստակի կարգ անցած էր Կիւրիին մէջ՝ կտակ մնացած այս տարօրինակ ճղնաւորէն:

Չորսիսի ձորի մօտերը կայ դուռ կաւի հանք մը, որուն հողը չափազանց մածոնցիկ է: Կիւրիեցիները դայն կը դործածեն օճառի տեղ, մանաւանդ մողերնին լուալու համար:

5.— Ենիչէրնիւ ժամանակ, որոնք յաճախ Կիւրիին հանդիպելու սովորութիւն ունէին՝ անոնցմէ մէկը հայու մը տունը հիւր կ'ըլլայ: Քանի մը օր ձրի ուտել խմելէն եւ տիշ քիբապիճ ալ առնելէն ետք՝ կը տեսնէ որ այդ հայ բնասանիւրը դեղեցիկ աղջիկ մը ունի եւ կ'ուզէ բռնաբարել դայն:

Աղջիկը կը փախչի. ենիչէրին դաշոյնը քաշելով՝ կ'աշխատի աղջիկը փոխցնել եւ կը սոյառնայ սպաննել: Աղջիկը ճարահատ՝ իր ամբողջ ուժով մաքրուելով՝ կը յաջողի թուրքին ձեռքէն խանարը առնել եւ անոր փորը խրել: Ենիչէրին դեպի կը փախչի: Սակայն միւս ընկերները վրայ կը հասնին ու կ'աշխատին աղջիկը բռնել: Կը փորձէ կրկին փախչիլ եւ տեսնելով որ անհար է դինք հետապնդող այս վայրենիներէն ազատիլ՝ յուսահատ ձեռքի խանարը իր կողմ կը խրէ եւ վերջ կու տայ կեանքին: Անօրէնները կու գան եւ անկենդան գիակի մը առջեւ դռնելով ինքզինքնին՝ վայրուկ կատողութեամբ դիակէն կը լուծեն իրենց վրէժը՝ դայն գնդակահար ընելով:

Աղջկան ծնողքը գալով անոր մարմինը ապառաժին մօտ, ձորին մէջ կը թաղէ: Գերեզմանին քովէն աղբիւր մը կը հասի: Հայ բնակչութիւնը ամէն տարի օխտի կու գայ անոր գերեզմանին:

6.— Եաշ Թեփէն եւ Թուրքերուն կոռնլիքները (պերեզմաննոցները) անցնելէ վերջ Կիրիւնի ամենէն վայրազ տաճիկներուն թաղը կու գայ: Բնակչութիւնը այնքան գէշ անուն հանած էր քաղաքին մէջ, որ եթէ մէկը հայ կամ Թուրք, վատ արարքի մը մէջ զանուէր՝ «աշուրենցմէ ես», կ'ըսէին:

Ռուս թրքական պատերազմին, այս թաղէն զինուոր դացող թուրքերը ամէն տեսակ չարիք հասցուցին հայերուն: Պատերազմէն յետոյ՝ սակայն, երբ Ռուսէն չարաչար յաղթուելով՝ անոնցմէ ոմանք ետ եկան, ջթերնուն հովը իջած էր: Այդ փոփոխութեան մէկ դրուազը կ'արժէ հոս արձանադրել:

Աշուր Մահլէի ամենէն վատ անուն հանած մարդը թուրքերուն թէ հայերուն մէջ՝ Լաս Ալի կոչուած անտակ կեանք տպրող եւ քաղաքին մէջ սարսափ ձգող երիտասարդ մըն էր: Բախտն այնպէս բերաւ, որ ան ալ զորք զնաց: Վերադարձին՝ բուսական խելօքցած էր: Բայց իր անունին սարսափը տակաւին չէր անհետացած:

Մայր եկեղեցիէն հեռու դանուղ հայ կիները՝ Կիրակի օրերուն չէին ուղեր պատարագէն զրկուիլ, այնքան ամուր էր հաւատքնին: Ռրովհետեւ թուրքին վախը արդեւ կ'ըլլար անոնց բաց դէմքով եկեղեցի երթալուն, ստիպուած էին ոտքէն գլուխ սուլանի մէջ փաթթուիլ, մինակ աչքերնին բաց թողելով:

Օր մը, Եաշ Թեփէի հայ կիներէն մին, այսպէս ծածկուած՝ եկեղեցի երթալու համար ճամբայ կ'ելլէ: Երբ Աշուր մահլէն կը մտնէ, ուրկէ ստիպուած էր անցնիլ, կը սկսի վախէն միշտ աջ ու ձախ նայելով քալել: Թուրքին մէկը անոր այս շուարումը տեսնելով կը մօտենայ եւ քաղաքավարի կերպով կ'ըսէ.— «Համբա՛ւ, ի՞նչու այդպէս շուարած, աջ ու ձախ նայելով կ'երթաս»: Կինը կը պատասխանէ.

— Ի՞նչպէս համարձակ քալեմ, սա Լազ Ալի կոչուած սրիկա շունէն կը վախնամ:

— Եկուր, մի վախնար, կ'ըսէ թուրքը, ես քեզի մինչեւ հայերուն թաղը ապահով կը տանիմ:

Կինը այս բարեացակամ թուրքին վստահելով մինչեւ հայերուն թաղը կ'երթայ: Թուրքը կը գառնայ եւ կը հարցնէ թէ՛ ապահով կը գգա՞յ այլեւս: Կինը կը պատասխանէ.

— Ո՛չ միայն ապահով եմ, այլ շնորհակալ եմ, որ զիս այդ շանը վտանգէն ապաստեցիք:

Այն ասէն թուրքը դառնալով կ'ըսէ.

— «Գատընրմ, պունասն սահրա գորգուաւզ քիլիսէնէ կէր, օ չափգրն քէօփէկ տետիկլէրի Լազ Ալի, պէն իմ» (Տիկիկս, սակէ ետք անվախ եկեղեցիդ զնա, այդ լիտի շուն կոչուած Լազ Ալին ես եմ):

7.— Աշուր Մահլէի մէջտեղը՝ ձախ թեւի վրայ՝ Թեքզէ տիրի բարձունքն երկարող լանջին կայ քարայր մը, որուն առջեւ աչքի կ'իջնայ բնութեան մէկ խաղը՝ քարայրի մուտքին, կը տեսնուի կանացի ձեւով բաւական բարձր ժայռի կտոր մը՝ կարծես մանուկ մը դրկին:

Շատ հին անցեալին՝ քարայրը սխտասեղի է եղեր, ուր բնակչութիւնը մատաղի պաշարներով դալով, ուխտը կատարելէ յետոյ, հոն՝ տեղին վրայ, թէ՛ յաւաչը կ'եփէ եւ թէ՛ մատաղն ալ պատրաստելով՝ անցորդներուն կը բաշխէ:

Օրին մէկը կին մըն ալ կու գայ իր երախտն զերկը՝ լաւաշը պատրաստած պահուն՝ պղտիկը գերկը կ'աղատատէ, մայրը քովը շոք շունենալուն՝ զայն մտքըկու համար լաւաշը կը դործածէ: Եւ անմիջապէս իր երախտին հետ քար կը կարին: Ըստ աւանդութեան՝ իրր թէ տակաւին վառարանին կրակը, լաւաշը բանալիք փայտը, երկաթեայ թիթեղը, բոլորն ալ քար կտրած՝ կարելի է տեսնել:

Կիւրիւնի հայերուն համար, հացը տեսակ մը նուիրական սրբութիւն ունէր: Պղտիկ կամ մեծ, դուբսը հաց կերած ատեննին, եթէ կտոր մը գետին իյնար՝ անմիջապէս կը վերցնէին եւ «մեղայ հացիկ» ըսելով կը համբուրէին եւ կ'ուտէին: Եթէ անդգուշութեամբ որեւէ հացահատիկ՝ ցորեն եւ պղպուժ թափուէր, նոյն ջերմեռանդ հաւատքով կ'աշխատէին հաւաքել: Հակառակ պարագային՝ հանդերձաւ աշխարհին իրենց թարթիչներովը հաւաքելու պիտի դատապարտուէին, կ'ըսեն ծերունի պատմիչները:

Տ.— Խոնուր կտուրէն քիչ մը հեռուն կայ Ղապալախիմ(1) աղբիւրը, թէեւ պղտիկ ջուր մըն է, բայց մշտական կը հոսի: Աղբիւրին շուրջը խոտ մը կայ, որուն լայն տերեւները, թարմ եղած ժամանակ, տեղացիները կը ժողուեն եւ մտով փոթթելով՝ սարմա կը շինեն, որ շատ համով կերակուր մը կ'ըլլայ: Այս Ղապալախին կապուած է հետեւեալ աւանդալէսը:

Կը պատմեն թէ ժամանակին՝ այս Ղապալախի աղբիւրին ակին մօտ դեղեցիկ աղջիկ մը նստած կ'ըլլայ: Երիտասարդին մէկը, միշտ երազին մէջ՝ իրեն բոլորովին անծանօթ այդ աղջիկը կը տեսնէ եւ այն համոզման կու գայ, թէ այդ դեղեցիկուհին իրեն համար ստեղծուած է: Եւ որովհետեւ երազը քանի մը դիւեր յաջորդաբար կը կրկնուի, կ'ուզէ անձամբ երթալ ու ստուգել:

Այդ խորհուրդէն տարուած՝ գիշերները աղբիւրը կ'երթայ աղջիկը տեսնելու յոյսով:

Գիշեր մը՝ հաղիւ աղբիւրին մօտեցած, դարձանքէն քար կտրած անշարժ կը մնայ: Լուսնի լոյսին տակ՝ իր աչքին կ'երեւայ գեղեցիկ աղջիկ մը, որուն նմանը հեքեաթներու մէջ պատմուելը միայն լսեր էր. ինչպէս սովոր էին ըսել. «տիւննա կէօզէլի էր: Իր յափշտակութիւնը սակայն երկար չի տեւեր, երբ աղջիկը տղուն դալը նշմարելով՝ աներեւոյթ կ'ըլլայ զապալախի լայն տերեւներուն տակ ծածկուելով: Տղան կու գայ աղբիւրին մօտ, բան չի գտնէր եւ շուտով կը մեկնի: Բաւական հեռանալէն վերջ՝ երբ ետեւը կը նայի՝ աղջիկը նորէն աղբիւրին քով կը տեսնէ, եւ դառնալով հաղիւ մօտեցած՝ աղջիկը դարձեալ կ'անհետանայ:

Այս անգամ տղան՝ աղբիւրին վերեւը Ղաքար շիպի բարձունքին վրայ ելլելով կը նստի ու կը դիտէ: Աղջիկը խոտերուն մէջէն կ'ելլէ եւ ջուրին եզերքը գտնուող դայլու աղ կոշուած աղաղիի նման փայլող քարէն առնելով կը սկսի իր մաղերը շտկել:

Տղուն բոլոր ջանքերն ապարդիւն կ'անցնին, չի յաջողիր աղջիկը բռնել եւ վերաէն բարակ ցաւի կը բռնուի: Երկար ժամանակ հալ ու մաշ ըլլալէ յետոյ, կը մեռնի, աղբիւրի ակին մօտ անշնչացած:

1) Ղապալախը տեսակ մը վայրի խոտ է, որուն տերեւները յաճախ միմեծ մէկ ու կէս սառ երկայն եւ ուճէն աւելի լայն կ'ըլլան: Մասնաւոր տեղեր կը բուսնին: Անոնք ունին կեւ սիրով փաւեջ փուշեր եւ կաշուն են:

Այլլին ինքն ալ փոխադարձ սէր ունի եղեր տղուն հանդէպ եւ կ'ուզէ ժամանակի մը համար այս տեսակ կատակով մը անոր սէրը արծարծել. բայց այս խաղը սուղի կը նստի. տղուն մահը շատ գէշ կ'աղբէ իր վրայ. սրտով կ'երթայ անոր մեռելը կը վերցնէ եւ ազրիւրին մօտ կը թաղէ եւ միշտ այցելութեան կու գայ գերեզմանին:

Օրին մէկը յասարեկ՝ անձնասպան եղած գտնելով ալլին ալ, տղուն գերեզմանին վրայ կը թաղեն զինքն ալ: Այդ պատճառով այս կանաչ տերեւները երբեք չեն անհետանար եւ խրաքանչիւր զարնան, նորէն կը ծլին եւ իրենց լայն տերեւներով կը զարգարեն անոնց գերեզմանը:

9.— Մարապի ձորին եւ Սաս պաղի միջեւ՝ դուռ հայաբնակ թաղ մըն է Ղարա Թեփէն՝ քանի մը հարիւր ընտանիքով, որ կամարակապ քարէ կամուրջով մը կը միանայ հին քաղաքին՝ Մաղին ու շուկային հետ: Այս թաղի ձախ կողմին վրայ կայ սեւ բլուր մը, որուն աւանդովէս մը կապուած է:

Թաղի բնակիչներէն՝ Բանջարենք Պանճար տէտէ անունով հարիւր տարեկանի մօտեցող ծերունի մը ունէին, որ տյապէս կը պատմէր Ղարա Թեփէի մասին:

Հին օրերուն, երբ աւշարները կիւրնը թալանելու կու դան, զեռ կալին զիւզը չհասած՝ այս լեռան գլուխը սեւ դայլ մը կ'երթայ եւ կ'ոռնայ եղեր: Գայլին ոռնալու ձայնը լսելուն՝ կիւրնի աւատակներն՝ Ֆաթիհ աղային լուր կու տան:

Ֆաթիհ աղան խեղոյն թագէ թաղ թմբուկ զարնել տալով՝ զօրակոչ կ'ընէ, աղբարարելով, թէ սեւ դայլը վտանգին պալը կ'իմացնէ: Այս լսելով՝ հայ թէ թուրք՝ դեռ թշնամին չեկած՝ կը զինուին եւ զիրքը պրակելով պատանէշներու ետին, դարանակալ կը սպասեն: Աւշարները յանկարծակիի գալով՝ կը ջարդուին եւ զլիկոր փախուստ կու տան:

Օրին մէկը, որսորդ մը, որսուցած լարելով սեւ դայլը կը բռնէ եւ կը սպաննէ, անոր մօրթէն մուշտակ մը շինելու յոյսով: Բաւական ժամանակ անցնելէ ետք՝ աւշարները փորձ մը եւս կ'ընեն քաղաքին վրայ յարձակելու: Գայլը սպաննուած ըլլալով հաւար տուող չ'ըլլար եւ ատոր համար թշնամին բնակչութիւնը անպատրաստ գտնելով՝ անոնց դիմադրութեան հանդիպելու կը կողոպտէ:

Ֆաթիհ աղան զայրացած՝ որսորդը փնտռել կու տայ եւ կը յաջողի ձեռք ձգել եւ զայն բերելով՝ իր տան բակին մէջ ուղեքը վեր դրուիւր վայր կախել կու տայ: Որսորդը թուրք մըն է եղեր: Ֆաթիհ աղան անոր դիակը սեւ լեռան գագաթին վրայ թաղել կու տայ:

Թուրքին ընտանիքը միշտ կու լայ, կ'ողբայ եղեր անիծելով՝ «Ղարա Թեփէ, զարա զուրտ, զարա հերիֆ, կիւնիմի խարապ էքտին» (Սեւ բարձունք, սեւ, սեւ մարդ, օրս քար ու քանդ բրիր):

10.— Կիւրնի ծերերը այսպէ՛ս պատմած են տհազին, տաշուած քարերով շինուած Պուրճի մասին, որ իր ներկայ երեւոյթէն դատելով շատ հնութիւն ներկայացնող շէնք մըն է:

Իբր թէ՛ ժամանակին, երբ մեծ ու ազդեցիկ իշխան մը տէրն է եղեր քաղաքին, նախ Կիւրնի բերդը շինել է, արհեստական քարայրներու բարձունքին վրայ: Իշխանին անունը Պերճ է եղեր՝ ճենիվիդներու ժամանակակից եւ իր անունէն մնացեր է Պուրճը:

Ան քոյր մը ունի եղեր Լւ անոր բնակութեան համար շիներ է Պուրճը: Իշխանը քաղաքին բերդին մէջ կը բնակի եղեր, իսկ քոյրը՝ Պուրճին մէջ: Պուրճէն մինչեւ բերդը՝ էրբ թէ դեռնին տակէն ճամբայ կայ եղեր, որ երբ թշնամին բերդին վրայ յարձակի՝ իշխանուհին իր զօրքով եղբորը օղնութեան հասնի. իսկ իշխանուհին յարձակումի ենթարկուած պահուն՝ եղբայրը օգնութեան կը հասնի եղեր:

Տակուին վերջին ժամանակները տարածայնութիւն կար, թէ մարդիկ փորձած են այդ ստորերկրեայ ճամբէն Պուրճ երթալ, սակայն միայն կարողացած են մինչեւ դեռը հասնիլ:

ԹՕՊՐԱՂ ԵՂԵՆԸ

Ծովու ապստամբներու հիւսիսային կողմը, ժայռերու բարձունքին վրայ կան երկու արհեստական բլուրներ: Անոնք մօտաւորապէս հարիւր ոտքէն աւելի տրամադիժ ունեցող եւ երեսուն ոտքի շափ բարձր բոլորակաձեւ բլուրներ Լն: Կիւրինցիք «Թօպլագ Եղէն» անունը կու տան անոնց:

Ժամանակին երբ Աւշարները Կիւրինը կը պաշարեն թալանելու համար՝ Շուլուլի եւ Խօրէնի թաղեցիները իրենց արժէքաւոր ապրանքները՝ ոսկի, արծաթ եւ թանկագին քարեր՝ այդ բլուրին տակ դանուող քարայրին մէջ կը թաղեն: Տարածայնութիւն կայ՝ թէ հոն բաւական խոշոր դանձ մը պահուած է:

Անձանոթներու կողմէ փորձեր եղած են դիշերանց բլուրը փորելով դանձը դանելու: Սակայն կառավարութիւնը աշարուրջ հսկելով թող չտար, որ ոեւէ կասկածելի մարդ բլուրներուն մօտենայ: Հողակոյտին հասնելու համար պէտք է բարձրանալ դրեթէ ուղղահայեաց ցից պատիվեր մը, ուր մշտական արկածներ պատահելուն՝ «Աթ ուշարան» անունը կու տան անոր:

ԳՈՐՏՈՏ ԶՈՒՐԸ

Ծովին շէտին աջ կողմէն, էրէն տանող ճամբուն վրայ կայ Գորտոտ Աղբիւրը: Թէեւ անոր ջուրն առատ է, բայց մէջը լեցուն դորտ ըլլալուն՝ այնքան մաքուր չէ, այս պատճառով Գորտոտ աղբիւր անունը կու տան անոր: Այս աղբիւրին քովը կայ հողի հանք մը, դեղեցիկ մութ կարմիր գոյնով, ուրիշ աղջիկները եւ կամ նոր հարսերը տարին քանի մը անգամ կը տանին ու տան ներսի կողմը՝ դեռնիլ եւ պատերուն մինչեւ կէսը անոր կը ծեփեն: Կայ նաեւ ճերմակ հող մը, որ «Չարիտ» կ'անուանեն, անով ալ պատին կէսէն վեր կը ծեփեն, որ սենեակներուն սքանչելի դեղեցկութիւն մը տան:

Գորտի աղբիւրէն քիչ անդին կայ Էյէր Ղայան, որուն տակէն կը բխի ձերմակ աղբիւրը, դարունէն սկսեալ մինչեւ Օդոտոտ առատ ջուր ունի, անկէ վերջ կը նուազի: Էրէն թաղի բնակիչները առու բանալով մինչեւ իրենց պարտէզները տարած են այս ջուրը, որ թէ՛ ջրելու եւ թէ խմելու համար կը դործածեն:

Էյէր Ղայային ետեւի կողմը, ուր ծովուն կիճը կ'երկարի, առատութեամբ կը բուսնի վայրի կանկաւր, որուն թարմ ցողունները կը գործածուին

ուտելու համար: Անոր իշուէ անունը կու տան, իսկ արժաար թէ՛ կ'ուտեն եւ թէ՛ անկէ կը հանեն ծամելիք ճերմակ ձիւթը: Թուրքերը թէ իշմէն եւ թէ ձիւթը հաւաքելով կը ծախեն:

Լէրան այդ մասը առատ է վայրի բանջարներով եւ արմտիքներով, օրինակ դաշիկը, խորսանանան, իսկ դարնան տեսակ տեսակ վայրի ծաղիկներ, ձիւն ծաղիկ, վայրի շուշան, սրոնք ուրիշ ծաղիկներու հետ մեծցած՝ սքանչելի տեսարան մը, բուրաստան մը կը ներկայացնեն:



ԹՌՁՈՒՆԻՆ ՁՈՐԸ

Այս ձորին մէջ կայ աղբիւր մը, որ մօտաւորապէս հարիւր ութ բարձրութենէ վար թափելով՝ պղտիկ ջրվէժ մը կը դառնայ: Քովը կայ ահագին մեծութեամբ շէպ մը, որ Սալապ դայա կը կոչուի: Ապառաժի մաս մըն ալ իր վրայի կողմը կայ, որ երկուքի բաժնուած ըլլալուն համար ճեղք քարը կ'ըսեն: Անոր մէջտեղը ելլելը շատ վտանգաւոր է: Այս քարերն ալ հին ատեններէն մնացած իրենց աւանդութիւններն ունին:

Նշանուած ու նորահաս աղջիկներ, ինչպէս նաեւ նոր տոճուանացած հարսեր եւ երբեմն ալ երիտասարդ տղաք՝ խմբովին կու գան իրենց բազըը փորձելու: Հոս հողին մէջ կան մէճիտի մեծութեամբ բոլորակ քարեր, անոնցմէ հատ մը կ'առնեն եւ մտքերնուն մէջ իրենց բազդին վերաբերեալ դալտնիք մը բռնելով, կը ջանան բոլորակ քարը ստլապ շէպին վրայ փակցնել: Եթէ քարը փակաւ՝ զնողին բազըը յաջող է, եւ եթէ դեռ նշանուած չէ, կամ նշանուած է եւ կամ նոր տոճուանացած է՝ վարը կայնողները կը պոռան դաւեչտի ասնելով, — աղջիկ, լաւ նշանած մը պիտի ունենաս, միւսին ալ թէ՛ մօտ ատենէն հարս պիտի ըլլաս, հարսին թէ լաւ տղայ գաւակ մը պիտի բերես: Նոյն խօսքերը կ'սւղղեն նաեւ երիտասարդներուն եւ նոր փեսաներուն:

Բազդաւորներն ամօթխածութեամբ՝ երեսներն ձեռքովն ծածկելով ուխտատեղիէն վար կ'իջնեն, իրենց բազդին յաջողութեան համար ուրախութեամբ լեցուն:



ԿՈՒՁԻՆ ՁՈՐԸ

Մովուն հիւսիսային կողմը, որ Աթ ուշուրան կը կոչուի կայ Կուզին աղբիւրը, որ սքանչելի պաղ ջուր ունի: Քիչ վար ապառաժներու ճեղքուածքներէն ուրիշ աղբիւրներ եւս կը բխին: Ամառ ժամանակ կաքաւներն երամակներով կու գան ջուր խմելու համար եւ միւս կողմէ՝ առտուն կանուխ իրենց միանուազ կանչերով օղը կը լեցնեն:

Համադրեց՝
ՍՈՒՐԷՆ ՍՈՒՐԷՆԵԱՆ